Արձանագրություն N 4

ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/13 ծածկագրով գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 17 հուլիսի 2018թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Բաղինյան
Հանձնաժողովի անդամներ ՝ Տ. Ղուկասյան / գնահատող /
Շ. Իսախանյան /գնահատող/
Ս. Զաքոյան / բացող /
Գ. Խաչատրյան / բացող /
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

1. Ընտրված մասնակցի՝ <<ՄԵԳԱ-ՊԵՅՊԵՐ>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում միակողմանի հաստատված պայմանագիրը չներկայացնելու և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Հ. Բաղինյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

- ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/13 ծածկագրով գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման գնման ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչված <<ՄԵԳԱ-ՊԵՅՊԵՐ>> ՍՊԸ-ն սահմանված ժամկետում պատվիրատուին չի ներկայացրել միակողմանի հաստատված պայմանագիրը:

1.2 <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3 մասի համաձայն՝ <<ՄԵԳԱ-ՊԵՅՊԵՐ>> ՍՊԸ-ն զրկվում է պայմանագիր ստորագրելու իրավունքից:

1.3 Հիմք ընդունելով վերոգրյալը, հանձնաժողովը որոշեց.

- 6-րդ չափաբաժնում հաջորդաբար տեղ զբաղեցնող ճանաչել <<Լեգալ Պլյուս>> ՍՊԸ-ին և տեղեկացնել, որ ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնի առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հրավերով պահանջվող փաստաթղթերի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ –5, դեմ - 0:

2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ուղարկելու և վերջինիս կողմից ստացված պատասխանի մասին

(Հ.Բաղինյան)

2.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետը հանձնաժողովը որոշեց.

- ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) հարցում ուղարկել գնման ընթացակարգի հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցի՝ <<Լեգալ Պլյուս>> ՍՊԸ-ի, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում (16.07.2018թ.) ստացվել է տեղեկատվություն համաձայն որի՝ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ –5, դեմ - 0:

3. Հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Հ.Բաղինյան)

3.1 Ընդունել ի գիտություն, որ

- ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/13 ծածկագրով գնման ընթացակարգի 6-րդ չափաբաժնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցի՝ <<Լեգալ Պլյուս>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում (13.07.2018թ.) ներկայացվել է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հրավերով պահանջվող փաստաթղթերի համաձայն:

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի կողմից հաստատված գնահատման թերթիկները՝ որոշվեց՝ հաստատել գնանշման հարցման ընթացակարգի մասնակցի հայտի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել <<Լեգալ Պլյուս>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Հ.Բաղինյան)

4.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, ինչպես նաև սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը, պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել <<Լեգալ Պլյուս>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

5. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Հ.Բաղինյան)

5.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գնումների կազմակերպման բաժնում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Հ. Բաղինյան

Անդամ՝ ---------- Տ. Ղուկասյան

---------- Շ. Իսախանյան

---------- Ս. Զաքոյան

---------- Գ. Խաչատրյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան